ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2025 թվականի   N 315-Ա

## «ԲԻԶՆԵՍ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից 14.02.2025-ին հայտարարված «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար համակարգիչների և տպիչների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ն 5-րդ չափաբաժնի համար ճանաչվել է ընտրված մասնակից:
«Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ին 10.03.2025-ին armeps.am կայքի միջոցով ներկայացվել է «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկ:Հարավերով սահմանված ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հաստատված պայմանագիրը:
«Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ն, «Գնումների մասին »ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն,զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:
«ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի չկայացած լինելու մասին հայտարարությունը 25.03.2025-ին հրապարակվել է տեղեկագրում:
Ղեկավարվելով «Գնումների մասին »ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ՝

1.«Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել «Բիզնես Ըքաունթինգ» ՍՊԸ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025թ. մարտի 31
ք.Տաշիր